# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 2014-Ա « 05 » հունիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի Հ.2960-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության եզրակացությունն ու քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի հուլիսի 6-ի «Նուբարաշենի 10-րդ փողոցի հ.1/3 բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Վարդուհի Վարդանի Պարունակյանի, Սուսաննա Հարությունի Պարունակյանի, Համեստ Վլադիմիրի Պարունակյանի, Նաիրա Վիրապի Ապետյանի, Նարեկ Վիրապի Ապետյանի իրավունքները վերականգնելու, 76.45քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2960-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, ք.Երևան Նուբարաշենի 10-րդ փողոցի հ.1/3 հասցեի 215քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման նախաբանում՝ «591.45» թիվը փոխարինել «579.07» թվով, «376.45» թիվը փոխարինել «364.07» թվով, «53.77» թիվը փոխարինել «53.78» թվով.

3) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ կետերում՝ «76.45» թիվը փոխարինել «64.04» թվով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**